

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գործուղումը նախատեսվել է որպես 2017 թ. նոյեմբերի 25-30-ը Մասսիմո Ջենտիլի-Տեդեսկիի մասնագիտական այցի արդյունքներից մեկը:

Գործուղման ընթացքը ենթադրել է մասնագիտական վերապատրաստում և աշխատանք մատենագիտական և հեղինակային տվյալների հետ, երաժշտական ռեսուրսների գրացուցակավորում, ինչպես նաև հանդիպումներ գրադարանավարների հետ, երաժշտական գրադարաններ և ձայնային արխիվներ այցելություններ, գրացուցակավորման չափանիշների, մատենագիտական մոդելների և թվայնացման գործողությունների ուսումնասիրություն:

Այցելություններ

- Երաժշտական ֆոնդերի ուսումնասիրության գրասենյակ, Միլան
- Ջուզեպպե Վերդիի անվան կոնսերվատորիայի գրադարան, Միլան
- Բրայդենսե ազգային գրադարան, Միլան
- Միացյալ գրացուցակի և մատենագիտական տվյալների կենտրոնական ինստիտուտ, Հռոմ
- Ձայնային և տեսաձայնային նյութերի կենտրոնական ինստիտուտ, Հռոմ

1. Երաժշտական ֆոնդերի ուսումնասիրության գրասենյակ, Ջուզեպպե Վերդիի անվան կոնսերվատորիայի գրադարան (<http://www.urfm.braidense.it>)

Երաժշտական ֆոնդերի ուսումնասիրության գրասենյակը (URFM) հիմնվել է 1965թ. և երաժշտական մատենագիտության հիմնական կենտրոնն է: Հաստատության հիմնական գործառույթը տպագիր և ձեռագիր երաժշտության գրացուցակավորման կանոնների մշակումն է (<http://norme.iccu.sbn.it>), ազգային միացյալ գրացուցակի սպասարկումը (<http://opac.sbn.it>):

Միլանի կոնսերվատորիայի գրադարանն Իտալիայի խոշորագույն երաժշտական գրադարանն է (<http://www.consmilano.it/it/biblioteca>), որտեղ պահվում է ավելի քան 500.000 միավոր, որոնցից 30.000-ը՝ երաժշտական ձեռագրեր են:

Երաժշտական ֆոնդերի ուսումնասիրության գրասենյակում աշխատել ենք մայիսի 28-ից հունիսի 15-ը: Այդ ընթացքում իրականացրել ենք հետևյալ գործողությունները.

- Միացյալ գրացուցակում Արամ Խաչատրյանի և Կոմիտաս Վարդապետի ստեղծագործություններին վերաբերող գրառումների վերանայում և շտկում
- Գրադարանում առկա Արամ Խաչատրյանի երկերի ժողովածուի մատենագիտական գրառման վերանայում և մանրամասն վերլուծական գրացուցակավորում
- Հայ հեղինակների (կոմպոզիտորների, բանաստեղծների) անունների խմբագրում ու լրացում միացյալ գրացուցակում
- Զանազան երաժշտական ռեսուրսների գրացուցակավորում
- Ծանոթություն գրացուցակավորման չափանիշներին (ISBN) և IFLA նոր գրադարանային տվյալների մոդելին (LRM). այդ գիտելիքների կիրառում աշխատանքի ընթացքում

Աշխատանքների որոշակի մասն իրականացվել է Աթիլիո Ռոսսիի (URFM) և Մարտա Կատոլիոյի (Միլանի կոնսերվատորիայի գրադարան) հետ համագործակցությամբ:

Աշխատանքներն իրականացվել են զանազան գրացուցակավորման համակարգերով (<http://www.iccu.sbn.it/opencms/opencms/it/main/sbn/SbnWeb/>) և հատուկ հավելվածով՝ “Interfaccia Diretta” (<http://id.iccu.sbn.it>), որը կապ է ապահովում կենտրոնական գրացուցակի հետ: Հասանելի են եղել նաև առցանց և տպագիր տեղեկատվական նյութեր, ինչպիսիք են, օրինակ Համաշխարհային կենսագրական ցանկը (World Biographical Index) և Grove Online.

Իտալիայի միացյալ գրացուցակը հատկանշական է երաժշտական նյութերի համար գործածվող հատուկ տեղեկատվությամբ: Օրինակ՝ ստեղծագործությունների կամ մշակումների ձայների և գործիքների մանրամասն ցուցակ, կողմնորոշված տվյալներ երաժշտական ձևի, տոնայնության մասին, մեղեդու սկզբնատողը և ներկայացման ձևաչափը: Այս տեղայնորեն ձևավորված դաշտերն արդեն դարձել են ստանդարտ՝ ինչպես UNIMARC, այնպես էլ Marc21 միջազգային չափանիշներում:

Համեմատական վերլուծություն է կատարվել հայկական գրացուցակավորման համար գործածվող Koha Marc21 և տեղի ձևաչափերի միջև, ինչը լույս է սփռել Koha համակարգի՝ երաժշտական նյութը նկարագրելու հնարավորության բացակայության վրա: Լրացուցիչ տեխնիկական աշխատանքի արդյունքում կարելի է ուրվագծել հնարավոր զարգացումներ, որպեսզի լուծվի նշված խնդիրը:

2.Բրայդենսե ազգային գրադարան (<http://www.braidense.it>)

Գրադարանը հիմնական պատմական գրադարանն է տարածաշրջանում: Հիմնվել է 1770 թ., ընդգրկում է մոտ 1.500.000 ֆոնդային միավոր:

Գրադարանի թվայնացման բաժնի վարիչ Ալդո Կոլետտոյի ղեկավարությամբ մասնակցել ենք հնատիպ պարբերականների թվայնացման գործընթացին, ինչպես նաև ծանոթացել ազգային գրադարանում պահվող հայկական գրականության հավաքածուին՝ հրատարակված Վենետիկում, XIX դ.: Հետագայում նախատեսվում է

Հայաստանի և Իտալիայի համագործակցության արդյունքում գրացուցակավորել այդ հավաքածուն և, հավանաբար, թվայնացնել:

3.Միացյալ գրացուցակի և մատենագիտական տվյալների կենտրոնական ինստիտուտ

Ջուզեպպինա Լեոլինիի ղեկավարությամբ խմբագրել ենք հայ հեղինակների անունները, ավելացրել ենք կենսագրական-մատենագիտական տվյալներ, գրառումները բարձրագույն մակարդակի հասցնելու նպատակով ներառել ենք այնպիսի միջազգային տեղեկատուներ, ինչպիսիք են Վիրտուալ միջազգային հեղինակային ֆայլը(VIAF,<https://viaf.org>) և Միջազգային ստանդարտ անվանումների նույնացուցիչը (ISNI,<http://www.isni.org>):

Մարկո Սկարբաչեի ղեկավարությամբ ուսումնասիրել ենք թվայնացված նյութերի պահպանության, ենթատեղեկատվության (metadata) կառավարման, չափանիշների, ինչպես նաև նյութերի հասանելիության սկզբունքները (<http://www.internetculturale.it/>): Ծանոթացել ենք թվային տեղեկատվության տրամադրման կանոններին:

4.Ձայնային և տեսաձայնային նյութերի կենտրոնական ինստիտուտ

Իտալիայի ազգային հնչյունային արխիվը (<http://www.icbsa.it>) ներառում է ավելի քան 450.000 հրապարակված և արխիվային ձայնագրություններ:

Այցելության ընթացքում ծանոթացել ենք ինստիտուտի՝ առաջին փորձերից մինչև մեր օրերը ձայնագրության կրիչներին նվիրված թանգարանային ցուցադրությանը, ինչպես նաև պահոցներին, որտեղ կրիչները պահպանվում են հնարավորինս բարենպաստ պայմաններում:

Աշխատել ենք նաև ձայնագրությունների թվայնացման ստուդիայում: Քննարկվել են ձայնագրությունների երկարաժամկետ պահպանման խնդիրները: Գործնական աշխատանքների արդյունքում մասնագետներ Ֆրանչեսկո Բալդիի, Անտոնելլա Ֆիսկետտիի, Լուչիանո Դալեոյի և Ջուլիա Պիպերնոյի հետ ուսումնասիրել ենք տարբեր տեսակի կրիչների թվայնացման միջոցները: Թվայնացրել ենք հայ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի՝ 1980 թ. նույն ինստիտուտի համերգասրահում կայացած համերգի արխիվային ձայնագրությունը, ինչպես նաև շտկել դրանց մատենագիտական գրառումները միացյալ գրացուցակում:

Գործուղման հնարավոր արդյունքները

Բրայդենսե ազգային գրադարանի հայկական ֆոնդի գրացուցակավորման համար հայ մասնագետի օգնությունն ավելի քան ցանկալի է. այդ աշխատանքն օգտակար կլինի ոչ միայն իտալական գրադարանին, այլև

կնպաստի հայ մշակույթի տարածմանը ընթերցողների համաշխարհային շրջանակներում:

Հայկական այբուբենի տրանսլիտերացիայի խնդիրների լուծումը ևս պահանջում է միջազգային համագործակցություն:

Բազմաթիվ միջազգային բառարաններ, ինչպիսիք են, օրինակ, Երաժշտական ձևերի և նվագարանների անունները, կարող են հարստացվել հայալեզու եզրերով: Հայկական գրացուցակավորման կանոնները IFLA-ի *Մեծնանուններ* բաժնում խիստ ժամկետանց են: Ցանկալի կլինի նաև խթանել դրանց նորացման գործընթացը: